

Գ Ա Յ Մ Ա Ն Բ

ՊՈՒԼՎԱՐԻՍ

Տարեկան 12 Ժր.
Վեցամսեայ 6 Ժր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ֆրկու թիւը մեկ ծրարով
Տարեկան 14 Ժր.
Վեցամսեայ 7 Ժր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2 60 Տօլ.
Վեցամսեայ 1. 50 Տօլ.
ԿԱՆԵԻԿ

ԻՄԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵԹ.



Լ Ր Ա Կ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

7084

Ediction du Journa

«Ira vounk»

(Bulgarie) VARNA

Редакция

на ВѢСТНИКЪ

«Ирауникъ»

ВАРНА

Գրողները եւ չեն
տրոհիր

ՏԵՂԱԿԱՆ

ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆԸ ԿԸ ԴԱՏԱՐԱԿՈՒԻ

Ազգ. վարժարանի նոր Հոգաբարձութիւնը վերակազմուել է և ընտրուած ու չընտրուած երիտասարդներ գործի մղուել է ի վեր՝ սրտի մասնաւոր անդորրութեամբ իր կը սպասէինք վարժարանական նոր շրջանի բացումին. Բայց ծնողները այդ համբերատարութիւնը չեն ցուցներ. անոնք իրենց մանչ ու աղջիկ զաւակները — մանաւանդ աղջիկ — առած օտար հաստատութեանց դռներ ձեռք կառնեն:

Բնական է կը հետաքրքրուինք անոնցմով. և ահա անոնք ամէնն ալ իրենց այդ քայլը արդարացնելու փաստեր կը ներկայացնեն. Որք կըսէ թէ՛ «հինգերորդ դասարան չպիտի բացուի եղբւր, իսկ իմ զաւակս Դ. դասարանը լրացուցած ըլլալով, ստիպուած եմ զանի օտար հաստատութիւն առաջնորդել թէ և հայերէնի մէջ դեռ չատ տկար է. որք կառարկէ թէ՛ «մանչերու և աղջիկներու դասարաններուն միացման մէջ անպատեհութիւններ կը կանխատեսեմ, և այս պատճառաւ կուզեմ իմ զաւակս քաջել առնել հոնկէ»։ ուրիշ մը կը պատճառաբանէ թէ՛ «քանի որ ֆրանսերէնը վերցուած է ազգ. վարժարանէն և հինգերորդ դասարան չպիտի ունենայ, ալ ի՞նչու տամ զաւակս հոն, երբ թէ՛ հայերէնի մէջ չատ տկար պիտի մնայ և թէ ֆրանսերէն պարզ կարգալու և երկու բառ հասկնալու անկարող պիտի ըլլայ»։

Այս առարկութիւններով երբ ազգ. վարժարանը կէսէն աւելի կը դատարկուի, հարկ է որ Հոգաբարձութիւնը իր այդ կարգադրութիւնները արդարացնող փաստերը հրապարակ քեն ու համոզէ ծնողները որ չը բաժնեն իրենց զաւակները ազգային հաստատութեանէն. Դէպի օտար վարժարաններ հօսանքը խիստ մեծ է այս տարի. անտարբերութեամբ միայն դիտող ըլլալ չէ ներքի:

արդէն ուշ ալ մնացին. բայց ինչ որ է, ուշ կամ կանուխ պէտք է այդ նոր կարգադրութեանց փաստաբանները մէջ տեղ ելլեն, խօսին քրքեն ու համոզեն ծնողները, աշակերտները և ընդհանուր հասարակութիւնը:

Անպատարատ ամբողջ սերունդ մը օտարներու գիրկը յանձնելու պատճառ ելող այս նոր կարգադրութեան հեղինակները լաւ կընէին, եթէ ծնողներու կարծիքն ալ առնել հաճէին, ընդհանուր թաղային ժողով մը գումարելով. Մենք պիտի առաջարկէինք անյապազ այս բանը ընել որով բարոյական ծանր պատասխանատուութեան մըն ալ ինքզինքներն մասամբ ազատած պիտի ըլլային Պ. Հոգաբարձութիւնը:

ՀԱՅԵՐՐ ՈՒ ԲԱՆԵՐՎԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Շար. Ասիտող Բիւրեւ)

Երթագրենք այժմ պահ մը որ, առանց այս դասակարգային խտրութիւնը նկատի առնելու, հայերը թուրքիոյ դէմ իրենց պայքարը շարունակեն ու օր մը յաջողին անկախութիւն ձեռք բերելու. այդ օրը, թուրքին դէմ ամեն պայքար վերջացած ըլլալով, դէմ դիմաց պիտի գտնուին ունեւոր ու չունեւոր դասակարգներ. նկատելով որ կարելի չէր ենթադրել որ այդ օրը բոլոր հայերն ալ վճակի հաւանաւասար կացութեան մը մէջ գտնուէին ինչ պիտի պատահէր այս պարագային. այս երկու դասակարգներն ալ նպատած ըլլալով անկախութեան գործին յաջողութեան — քանի որ միասին կռիւ մը զած էին — հաւասարապէս իրաւունք պիտի ունենային այդ յաջողութեան օգտուելու. Արդ, երբէք կարելի չէ որ այս երկու դասակարգներու շահերը իրարու հետ համաձայնին, վասն զի այն ատեն հարկ էր ենթադրել որ հարուստներ ինքնաբերաբար իրենց հարստութիւնը աղքատներուն մէջ պիտի բաժնէին:

Ինչ հետեւանքներու ուրեմն կրնար յանգիլ շահերու այս դասակարգային անխուստփելի բնորոշումը:

Կամ պէտք պիտի ըլլար որ չունեւոր դասակարգը, որ ամեն անգ ըստուար մեծամասնութիւն եղած է երկրին ղեկը ձեռք առնէր ու թու չիտար որ ժողովային դասակարգ մը շահագործուի դրիշ մարդկային դասակարգ:

զէ մը. կամ ունեւոր դասակարգը, ինչպէս Ռուսներու և Պուլկարիոյ մէջ, աշխատութեան գլուխ պիտի առնէր ու ձեռք բերուած անկախութիւնը պիտի գործածէր ոչ թէ համայն հայոց օգտին, հապա միմիայն սահմանափակ դասակարգի մը շահերուն:

Գնենք նախ վերջին պատահակնութիւնը:

Այս պարագային «հայերենք» իբրկութեան գործը ինքնին վիժած, ոչընչացած պիտի ըլլար, քանի որ ոչ թէ մեծամասնութեան հապա փորձամասնութեան մը շահերուն օգտային ազատութիւնը ծառայած պիտի ըլլար:

— Բայց պիտի առարկուի, գոնէ այս օրուն թուրքիոյ ջարդերը պիտի դադարէին, ու հայերը որքան ալ հեղձ ըլլան, այսօրուն չափ չըլլալով, աւելի նպատաւոր պայմաններուն մէջ այն ատեն կրնային եթէ ուղէին իրենց դասակարգային կռիւ մղել. ամէն կերպով հիմակուանին վրայ այն տառնի վիճակը աղաւելութիւններ պիտի ունենար:

Ընդունինք պահ մը թէ այս առարկութիւնը հիմնաւոր է ու թուրքիոյ ջարդերն ալ վերջ գտնեն — թէ և այս ենթադրութիւնը ծայրայեղութիւն մը ըլլար, նկատելով որ ոչ միայն երբ իր գրաւատիրական շահերը պահանջեն, Ռուսիա մը չի վարանիր խաղաղութեան ատեն իսկ հրոցանի բռնել տալ հազարաւոր խեղճ ուսու բանուորներ, կենդիւ ու տղաքներ, հապա նոյնիսկ մեծ յեղափոխութեան արդիւնք հանրապետական ժրանսան 1878ի ֆովիսին, ատեն այնքան վայրագութեամբ մը անխղճութիւնը ունենալէ ետք Բարի գի մէջ 35 հազար խեղճ բանուորներ ջարդել տալու, տակաւին շուէկ քանի ամիս առաջ վերստին իր սօժի մէջ խեղճ գործաւորներու կրնէր հրացանի բռնել կռտար:

Կը կարծուի՞ սակայն թէ այդ կարծեցեալ քաղաքական ազատութիւնը — որուն որքան անկախուն բան մը ըլլալը ամեն երկրի ժողովուրդները ցոյց կուտան — ժողովուրդի մը պահանջներուն բաւարարութիւն պիտի կրնան տալ. բայց որպէս զի ժողովուրդ մը կարենայ քաղաքական ազատութեան մը օգտուել, անհրաժեշտ է որ նախ «անտեսական ազատութիւն» վայելէ. առանց վերջինին, առաջինը իր կարեւորութիւնը կը կորսնցնէ, ու այս պատճառաւ է որ Պուլկարիոյ, Ռուսներու, Սերպիոյ ժողովուրդները քաղաքականապէս այսօր ըստաւարաւ աւելի մեծ ազատութիւն մը ձեռք բերած ըլլալով հանդերձ, նոյնքան խեղճ են ողջաւթ թրքական տիրապետութեան օրով, վասն զի «անտեսական» ազատութիւններն նոյն է այսօր, ինչ որ էր

թուրքերու օրով. ու գոն կերթան այսօր դրամատէրներու շահագործութեանը. (Շատ սխալ Մ. Ռ.):

Ինչ օգուտ ուրեմն որ հայերը քաղաքական ազատութիւն վայելէին, ընտրողական իրաւունքներ, եւս, ունենային, երբ անտեսական տեսակետով նոյնքան խեղճ պիտի մնաս, ու երբ այս խեղճութիւնը ստիպողաբար անոնց քաղաքական ազատութիւնը պիտի ոչնչացնէր. կարելի՞ էր ըսել այս պայմաններու մէջ որ հայերը ազատագրական անկախութիւն մը ձեռք բերած պիտի ըլլային. բայց նոյնիսկ այսօր դժուար պիտի ըլլար ըսել հայոց համար որ միմիայն քաղաքական կաշկանդումներու համար է որ յեղափոխական շարժումին յարած են. վասն զի 10 տարիէ ի վեր միայն հայկական ջարդեր տեղի կուենան, մինչդեռ հայ յեղափոխական գործունէութիւնը շատ աւելի առաջին սկսած է, ոչ թէ վերջ տալու համար գոյութիւն տակաւին չունեցող ջարդերու. հապա վերջ տալու համար գրեթէ ճնշող ճնշանակաւ ճառապանքներու. «անտեսական տառապանք» ուրեմն զիլաւարարաւ յեղափոխական շարժումին յարժուորն ծնունդ տուած ըլլալով, անոր վերացումով միայն յեղափոխութիւնը իր նպատակին հասած պիտի նկատուի, արդ, ինչպէս վերը տեսնուեցաւ ունեւոր դասակարգի մը տիրապետութիւնը վայելող հայկական անկախութիւն մը հայոց մեծամասնութեան չի կրնար բնաւ երաշխաւորել այս տեսնական տառապանքներու» վերացումը, որ ամէն յեղափոխութեան հիմն ու նպատակն է կամ պէտք է ըլլայ եւ որուն առջեւ քաղաքական ամէն կարգի ազատութիւններ երկրորդական դեր մը կը գրաւեն, բոլորին ալ օգտակարութեան պայմանները բացարձակապէս առաջինին գոյութեան կախում ունենալով:

Հայերը ուրեմն իրապէս այն ատեն միայն հայերենիք ազատութիւնը ձեռք բերած պիտի ըլլային, եթէ մինչև այդ ազատութեան օրը ունեւոր դասակարգին աջակցութեան օգուտ քաղել գիտնալով, թու չի տային որ անկէ ետք անոնք երկրին վարչութեան մէջ կառավարչական ունէ գեր մը կատարեն:

Միայն թէ մինչև անկախութեան օրը այս իրարու հակառակորդ երկու դասակարգերու գործակցութիւնը երբէք առանց վտանգի չէ:

(Շարունակելի)

Տ. ԷԼՄԱՍԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԻՃԱԿԷՆ

Քէմախի Բագառնի գիւղ 31 յուլիս
Ազնիւ Եղբայր իմ,

Կրկին անգամ գրիչս գողգոջուն ձեռքս առնելով կուգեմ. երկրորդ անգամ հայրենիքի վիճակի վրայով մի քիչ տեղեկութիւն տալ:

Ինչպէս 1895-96էն սարսափները, այսօր մեր ալ առջեւ կը պատկերանայ նոյնը:

Այժմ մեր ընտանեաց գաւակաց կեանքը փրկելու միջոց կը խորհինք եւ ալ ամէն ինչք եւ ստացուածք ոչինչ մեզ համար, միայն մեր պատիւը պահելու միջոցը կը փնտռեմք, չեմ գիտեր ինչ գրելու այլ չուարած կը մնանք:

Ինչպէս ասկէ մէկ ամիս առաջ քեզ գրեցի թէ քրտներ Եփրատի միւս կողմի թիւրք գիւղերը, Ղուչկէշէի կողմը, ամբողջ գիւղերը աւարի տրուին, անասունք ոչխար եւ մինչեւ անգամ տունները, եւ գիւղացիք բողբոջներ երկզա միւթասարքիին որ անձամբ եկաւ եւ ականատես եղաւ. բայց երբէք արգիւնք մը ցոյց չի տուաւ եւ գիւղացիք տեսնելով որ անտարբեր է, քէմախի կառավարութիւնը կոխեցին եւ միւթէսարքիին լաւ ծեծ մը քաշեցին եւ կառավարական պատուհանք բոլորը կոտորեցին: Եւ ծեծը ուտելէն վերջ գնաց իւր տեղը առանց ձայն հանելու:

Եւ հիմա թուրք գիւղերի աւերումը ջրանալուն սկսեցին հայ գիւղերի: Ինչպէս 1895ին աւազակները վախճալով ոչխարները փողոցներ ու տանիքներ կը պառկեցունէին, նոյնը հիմա արտաւարներէն վերցնելով բերին գիւղին մէջ, ուր կը պահուին գիւղերը յարձակման մը դէմ: Ամբողջ բնակիչք աւանջին ծածկեցին: զանգակին հնչման կապսն իբր գուժկան վրտանգին: Հիմա քրտներ կրնան եկած են Ղուչկէշէի գիւղեր, եւ կալեր կը չափեն եւ ըստ օրինի տասանորդ կառնեն: Խնդճ թիւրք գիւղեր չի կրնա, լով դիմադրութիւն ընել, ալ եկած են քէմախի կառավարութեան կրօն «մէկ ծարը, եթէ չէք կրնար մեզ պաշտպանելու, մեզի պատասխան տուէք որ մենք ալ մեր գիւղուն ճարը նայինք. կամ Թուսիոյ եւ կամ Անգլիոյ աջակցութիւնը խնդրեմք. Անոնք փրկուած են գայմագամը որ զարնեն բայց չեն գաած:

Այժմ քէմախի խանութներ 15 օրէ գոց են, քանդի Գիւրտեր սպանական ծառայները զրկած են գայմագամին եւ Թաւրի փաշային: Այս ամեն խառնակութեան առջեւ Երիզայի միւթէսարքիք եւ Զորորդ Դանակին հրամանատարը ընդորովին անտարբեր կը մնան:

Ա. ԵՐԵՎԱՆԵԱՆ

ԱՒՍԶԱԿԱՊԵՏԸ

ՄԱՍՆ ՀԻՆԴԵՐՈՐԴ
ԱՒԱՐԱԿԱՊԵՏԸ
(Ծար. նախորդ թիւէն)

Լուսիա կը քնանար:
Անոր երեսը պատին կողմը ծածկէր ու կիսովին կը ծածկուէր իր ճակատէն վար թափված ծամերու յորդումի մը մէջ: Մէկ թեւը վերմակէն

Անա ապացոյց մ' ուստիկանութեան անձարակութեան. Մեր գիւղէն Տէր Ղազարեան կ'ըրակոտր պահպանութենէ կը վերադառնար, երբ կու գայ Երիզայ, կը լսէ որ ճամբան վտանգաւոր է, կը գիտէ ուստիկանութեան եւ երկու ուստիկանի առաջնորդութեամբ կը ճամբորդէ: Ամսոյս 28ին Փաշախանէն կ'ելլէ դէպի գիւղ: Երբ կը հասնին Շորախներ ըստած տեղը կը տեսնան որ Գիւրտեր կանցնին խիլ մը անասուններ քշելով զորս Թուրքան գիւղէն յափշտակած էին ցորեկ օրով: Երբ ուստիկանք կը տեսնան Գիւրտերու անցքը անմիջապէս յետ կը դառնան դէպ ի խանը մինչեւ որ Գիւրտեր անցնին երթան իրենց աւարներով:

Նորէն ամսոյս 27ին իրիկուան ժամ 11ը 20 վայրկեան անցած Զաքարի եւ Ուռի ըստած գիւղեր Գիւրտերէ պաշտպանեցան եւ հնչուն գրամ 20 ոսկի պահանջեցին Զաքարիներէն. անոնք ալ ըսած են չունինք. ուստի սկսած են յարկներէն անասունները քշել: Խեղճ գիւղացիք կը տեսնան որ ճարը չիկա, ուղածնին կուտան: Անկէ վերջ Գիւրտերը կը մտնեն եկեղեցին եւ պատարագի զգեստներ, ոսկեթելով բտնուած 70 ոսկի արժէք ունեցող շուրջաւ մը կ'առնեն կը տանին: Ուռի գիւղէն դեռ լուր չ'առինք. քանզի գիւղերէն յարաբերութիւնք կ'ստուած են: Այժմ մեր գիւղը եւ Հաղարիկ եւ Մարէք գիւղերը զեռ վնաս մը հասուցած չեն: Բայց ըսած են թէ այս գիւղերը ամենէն վերջ մերն է: Վերջապէս գաւառին բնակչաց վիճակը անապահով է, խեղճ ու թշուառ: Հարկահաւաք պաշտօնեաներ շատ մը թուրք գիւղերէ վնասուած են, ըսելով թէ զուք որ պէտք եղած պաշտպանութիւնը չէք կրնար ընել, ինչ լէս տուրք առնել կը վնասք:

Վերջապէս շատ անտանելի է մեր վիճակը: Արեւմտ աղօթեցէք մեզ համար որ Աստուծոյ պաշտպանութիւնը շուտ հասնի մեզ:

Մնամ քոյ հարազատ եղբայրդ

ԹԻՔԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ
ԵՒ
ՄԱԿԵՂՈՒՆՈՑ ԲԱՐԵՆՈՐԴՈՒՄԸ

Բարիդի մէջ հրատարակուած է այս վերնագրով հատոր մը Մալկեդոնիոյ մասին գրուած որմէ կը քաղենք հետեւալ տույրերը:

«Զորս տարիէ ի վեր է որ Մալկեդոնիոյ մէջ բարենորոգումի գործը կը հետապնդուի, սակայն ցարդ իրական արդիւնք մը չը տեսնուիր, երկիրը

զորս ինկած էր, որուն վրայ էր թրթորաւ նստր չապիկը:

Աւազակապետը խորին կակիծով մը մօտեցաւ անոր սնարին ու սկսաւ գիտել:

Դէմքը տփույն էր, այտերու ձուածե փափկութիւնը թօշնած էր, ինչպէս աշխարհ տերիւ մը. չրթունքը կորսնցուցած էր իր վարդապետին հրապոյրը. ճակատը մաշու էր, ինչպէս մահու ստուերը. . . ու Լուսիա ծանր շունչ մը կը հանէր, որ խղճուելու մօտ հեւքի մը պէս կը մարէր:

Աւազակապետը կէս ժամէն աւելի սպասեց, Այդ միջոցին Լուսիա իր տանդին ճնշումէն ինքզինքը կորսնցուցած՝ սկսաւ բանդագուշել:

— Հո՛ն, հո՛ն. . . տրեւնով ներկուած հայրենիքի՛ն մէջ. . . անոր

խաղաղելէ հետեւ է եւ անմեղ արեւնի հոսումը անդադար կը շարունակուի: Բարենորոգման գործին մէջ միակ միութարականը այն է որ օտար քաղաքական գործակալները միայն կերպով կը կենան Մալկեդոնիոյ մէջ, զանազան տիտղոսներով, հսկելու համար բարենորոգման գործադրութեան. եւ սակայն անոնք ազդուօրէն գործելու համար հարկ եղած իրաւասութենէն զուրկ ըլլալով, հոն իբր միայն ականատես եւ անկողմնակալ վկաններ կը մնան բացայայտ զեղծութիւններու, արեւնի հոսումին եւ ժողովուրդներու քննաշնորմին առջեւ: Տխուր է մտածել թէ, իրենց գործակալներուն անձեռնհաս ներկայութեամբ, եւրոպական պետութիւնները գողցեա կուգեն տեսակ մը հաւանութիւն տալ ամենօրեայ ըզրամթիւ ոճիրներուն եւ աներեւակայելի զեղծութիւններուն, որոնք անոնց ցոյց տուած են այնչափ ատեններէ ի վեր եւ որոնք բարձունքին համար անոնք այնչափ դիմումներ ըրած են ի զուր:

Մուրցսթէի բարենորոգման գործադրութեան սկսելու օրէն ի վեր, մալկեդոնացի ժողովրդեան յեղափոխական շարժումը քիչ քիչ խաղաղի կը սկսէր, որովհետեւ ամենը կը յուսային վիճակի բարւոքում մը, հաստատուում հանրային շարունակական ազատութեան, արդէս իւրաքանչիւր ոք ազատօրէն զբաղէր իր գործերով: Եւ այս ալ հակառակ ումանց տարածած այն յոռետես կարծիքին թէ կարեւոր պայմաններ կը պահէին Մուրցսթէի բարենորոգման մէջ որոնցմէ կարելի ըլլար լաւ արդիւնքներ սպասել: Պուլկար յեղափոխական հրոսակախուում բերն սկսան ապսխլել եւ մալկեդոնական գոմիթները առժամապէս ընդհատեցին իրենց տնդոտ գործունէութիւնը, արդէս իւրաքանչիւր ըլլար բարենորոգչական գործին հետեւիլ: Բայց, նոյնպէս սկզբնաւորութենէն, Յունաստան եւ Սերպիա զօգու մնացին այն գործէն որուն եւրոպական պետութիւնները կը ձեռնարկէին: Այս երկու պալլաքանական պետութիւններուն շահերը կը պահանջէին Մալկեդոնիան թողուլ թուրքոյ փառս ուժի մին տակ, թողուլ այս զօրաղդ երկիրը բռնակալական դրութեան ենթակալ եւ անհաւասարութեան ու բնաջնջումի մատնուած: Անա ասոր համար տնոնք բողբոջեցին Պէդրիի զանազարին: 23-րդ յօդուածի գործադրութեան դէմ եւ գիւմեցին անարդարանալի միջոցներու այս խնդրոյ առթիւ իրենց քաղաքականութիւնը ցոյց տալու համար:

Թուրքիան եւրոպական պետութիւններէն ստիպան, զորս կը ներկայացնէին Աստուծոյ-Հունգարիա եւ Ռուս

սիա, ընդունեց եւրոպական «Գոթթուր» եւ ուստիկանութեան վերակազմութիւնը, եւ սակայն նա անմիջապէս պէտքը զգաց դաշնակիցներ ունենալու ընդդիմադրութեան համար: Յունաստան եւ Սերպիա շուտով անոր ձեռք կարկառեցին. այն ատեն անոնք սկսան հրոսակախուումներ զբղիւլիլ Մալկեդոնիա կաղութիւնը ծանրացնելու համար, արգելք ըլլալու նպատակաւ եւրոպական բարենորոգման գործին եւ այսպէսով օգնելու օսման. կառավարութեան ընդդիմութեան օթուրք երիտասարդութիւնը, մանաւանդ պաշտօնեաները եւ սպանները, հաճութով դիմեցին Մալկեդոնիա զրկուած զինեալ հրոսակախուումները կոտորութեան ամբողջութիւնը փրկելու եւ շահերը պաշտպանելու համար: Անոնք բացայայտ կերպով յայտնեցին իրենց համակրանքը դէպի հրոսակախուումները եւ անոնց օգնեցին ու զանոնք պաշտպանեցին: Մէկ կողմէ թուրք պաշտօնեաներու ու սպաններու եւ միւս կողմէ յոյն եւ սերպ հրոսակախուումները եղբայրակցութեան եւ մեղսակցութեան պարագաներ արդէն խիստ բազմաթիւ են: Այս գերքին մէջ ընթերցութեանը պիտի գտնէք բազմաթիւ դէպքեր, վաւերաթուղթեր եւ անհերքելի ապացոյցներ որոնք ցոյց կուտան աւսթրիա մեղսակցութիւնը իշխանութեանց յոյնիւ սերպ հրոսակախութեան հետ: Այս մեղսակցութիւնը անհերքելիօրէն ապացուցուեցաւ նաեւ օսմանեան դատարաններու մէջ հրապարակային դատավարութեանց միջոցին: Քանզան դատարաններու արձանագրութիւններէն եւ վճռագրերէն քաղուած վաւերական հետուածները եւ նախնութիւնները տպուած են այդ գիրքին գլուխներուն մէջ, որ մասնաւորապէս յատկացած են Մալկեդոնիոյ երեք նահանգներու դատարաններու վճիռներուն:

Իրաց այս վիճակը կը շարունակուի դեռ այս ժամուս: Յոյն եւ սերպ խուժեր կը շարունակեն երկրին մէջ հոն հոս վաղվադէլ ոչ թէ թուրք «ուժիմ» ին դէմ հուսելու, այլ զայն պաշտպանելու համար, բնաջնջելով անգլէն ու անպաշտպան պուլկար ժողովուրդը, երբ սա յանդգնութիւնք ունենայ կառավարութեանց կամ հիւ պատմաներու առջեւ յոյն եւ (հարաւային եւ արեւմտեան Մալկեդոնիոյ մէջ) կամ սերպ եւ (հիւսիսային Մալկեդոնիոյ մէջ) չընեղաւ եւ կամ չ'ընթակուի, եւլու Տիեզերական (յոյ) Պատրիարքարանի հոգեւոր իշխանութեան: Բարենորոգչներուն եւ Պուլկար ինքպաններուն ճնշումին տակ օսմ. կառավարութիւնը ամէն օր հրամաններ կուտայ տեղական իշխանութեանց հետապնդելու յիշեալ հրոսա-

նապանքը լեցուեցաւ: Հանգչէ վայր կեան մը. . . բարձիգ վրայ դիր գլուխդ. . . թող որ քու գոգնիւնը ուղ մէջ մեռնի, ննայի ծեղի թ աւ օրերուդ. . . Այլ ո՞ր կեռութիւն. . . անոր կը թափառիս: Այդ լեռները, այդ ապառաժները. . . այդ գարնանիկ գիւղերները միթէ՞ վերջ չունինք քեզի համար. . . Եկո՛ւր, աղվաւոր մօտ եկո՛ւր. . . մի՛ թողւր միտիկ հետեւ քու գործիւնդ. . . եկո՛ւր, կրօն, եկո՛ւր որ աստէր մեռել մը չ'ունենան. . .

Աւազակապետը չր կրցաւ դիմանալ ինքի իրո՞ք ելած վիճակի մը մէջ Լուսիային ձեռքը բռնեց ու ձախեց. — Լուսիա՛, Լուսիա՛. . . Լուսիա շարժում մ'ընաւ ու աչքերը բացաւ:

խումբերը, զօրքը մերթ ընդ մերթ ընդ-
հարուստներ ու կռիւներ կռնենայ ա-
նոնց հետ, բայց չեն ծածկեր այն հա-
մակրանքը որ կը շարունակուի թուրք
պաշտօնեաներու, սպաներու եւ թէ այդ
նահանգներու թուրք ժողովուրդին մէջ
յոյն եւ սերպ հրոսակաւորներուն նը-
կատմամբ: Պուլկար գիւղերու վրայ
յարձակումները եւ բնաջնջումը ու
արտաքսումը պուլկար գիւղացիներու
օրէ օր կաւելնան: Երբեմն պուլկար
գիւղացիք կը յաջողին փախչել խուժ-
բեր կազմել, յոյն եւ սերպ հրոսա-
խումբերու դէմ պաշտպանուելու հա-
մար, բայց այս պաշտպանութիւնը ան-
նշան է, քանի որ կառավարու-
թիւնը կարգիլէ պուլկարներուն զէնք
ուսնեալ: Այն ամենօրեայ խուզար-
կութիւնները որ կը կատարուին պուլ-
կարական գիւղերու մէջ, միակ նպա-
տակ ունին խեղճ պուլկար գիւղացիին
էն անմիջ զէնքերն ալ վրաւելու եւ
կը հաստատեն կատարելապէս մեր ը-
սածները:

Դժբաղդապէս անխնայութիւ-
նը եւ կոտորածները միշտ պիտի շա-
րունակուին: Եւ կը կանխատեսուի
թէ չպիտի ալ զաղբին որչափ ատեն
որ Յունաստան եւ Սերպիա ուզեն
Մակեդոնիոյ բաժանումը եւ թէ, ա-
նոնք համաձայնած թուրքիոյ հետ, հա-
կառակին լուրջ բարենորոգմանց գոր-
ծադրութեան, կամ ցորչափ Մերոպա-
կան պետութիւնները չորոշեն առաջին
առթիւ ուժ գործածել թուրքիոյ դէմ,
բարենորոգումները գործադրել եւ եր-
կիրը խաղաղութեան եւ կարգաւորու-
թեան մէջ դնել:

Եւ Անգլիան է թէ Մուրցստէքի բա-
րենորոգումը շատ մը կարեւոր կէտե-
րու մէջ անյաջողութիւններ ունեցաւ:
Այս բարենորոգումները թուրք կա-
ռավարութեան առիթ տուին յապաւե-
լու երեք նահանգներու մէջ քրեատո-
նեայ ժողովուրդներուն շատ մը իրա-
ւունքները զորս առաջ կը վայելէին:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

— ❦ —

Սիւրբիւնի Ազգ. վարժարանին անու-
նով հանգանակութեան ելլող Տ. Կա-
րապետ ցնչոյ. Սահակեանի այժմ ուր
գտնուիլը գիտցողներէ կը խնդրուի որ
հաճեն քարդով մը իմացնել խմբագր-
րութեանս:



— Ինչ ունիս, աղջիկ, ո՞ւր տեղդ
կը ցաւի հարցունք Աւագակապետը:
— Ո՛հ, հայր իմ գոն հա . . . մոր-
մը չից Լուսին արցունքները հեղեղի
պէս թափելով:
— Ինչու կուլաս, սիրելի աղջիկս
... նայէ՛ ալ քու քովդ եմ . . .
ա՛յ չեմ բաժնուիր քեանէ . . . ա՛յ
գրկիս մէջ ես:
— Հայր իմ, Հայրենի՛քը, հայրե-
նի՛քը տար գիս . . . ես չեմ կրնար
հոս ապրիլ: Ա՛խ, գիտեմ, գիտեմ . . .
ալ պիտի մեկնեմ . . . պիտի մեռ-
նիմ . . .
— Մտերի՛ւ . . . քոնչ է կըսես,
Լուսին . . . գո՛ւն՝ որ ամեն ատեն
սրտ կ'ուռայիր ինձի, դո՛ւն որ իմ
տխուր ժամերուս մէջ սփոփանքս էիր,
ի՛նչու ատանկ խօսքեր ընելու թոյլ

ԴԱՐՄԱՆՈՒՄ ԵՒ ԲՈՒԺՈՒՄ ՆԻՒԾԱԽՏԻ

— ❦ —

ԴՐՅՑ

ՏՕՔԹ. Մ. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ԲԺՅԿ ԱՐԲՈՒՆԻ ՊԱՆՍԱՆ

(Շար. նախորդ քիւնէ)

ԻՆՎԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒՅԻՆԻՆԸ

Մեր մեթոտով գործածելի դեղերն
երկուք են, երկուքն ալ բուսեղէն եւ
դոտուէն գործածելի:

1. Մէկը հեղուկ կը կոչուի:

2. Միւսը, տաժ (լափա) մը, կը
կոչուի:

Առաջին գործածութիւնն հետեւի

Մէկ կանգունին չափ չգործածուած
կակուղ հաստ կամ նոյն մեծութիւ-
նով սրբիլ մը (խաւիւր) մէկ քաշ պաղ
ու մաքուր ջուրի մէջ 25 տրամ կամ
75 կրամ հեղուկ գեղէն խառնելով,
աղուոր թրջել, եւ անշուշտ շկաթե-
լու չափ աստիճան քամիլէն ետքը՝

1. Հիւանդին տը ձեռքի մատները,
ձախ ձեռքի մատներուն վրայ բռնած
ու սրբելու ծառայող լաթը չորս ծալ-
լուած, ալ ձեռքի մատներուն վրայ
բռնուած կամ տարածուած ալ ուսէն
սկսելով, առջեւէն, ետեւէն, ալ ու
ձախ կողմերէն, վերէն վար ալ թեւը
ամբողջովին սրբելու է:

2. Նոյնպէս թրջելու է ձախ թեւը,
բայց լաթին դուրսից սաքցած ըլ-
լալուն մէջի կողմը դուրս դարձնելու
է աւելի պաղ ըլլալուն:

3. Միեւնոյն լաթը նորէն ջուրը
թաթիւնով ու քամելով, նախ՝ կուրծ-
քը, յետոյ կանակը ամենայն արագու-
թեամբ սրբելով, հիւանդը անմիջապէս
չապիկը հագնելու է, առանց մարմինը
չորցնելու:

4. Լաթը, երրորդ անգամ թրջելով,
պորտէն սկսեալ նախ վարը, յետոյ ալ
ու ձախ ուղեքը, թեւերուն նման
սրբելով, հագնելու է: հագնելէ յե-
տոյ հիւանդը՝ թէ որ կարող է, սեն-
եակին մէջ հինգ վայրկեանի չափ քա-
նելու է եւ կամ անմիջապէս անկողին
մտնելով լաւ մը ծածկուելու է, որ-
պէսզի մարմինը աղուոր մը տաքնայ:
Այս գործողութիւնը կարելի եղա-
ծին չափ արագ կատարելու է:

Այս գործողութեան մէջ հետեւեալ
վեց պայմանները ամենայն ճշգրտութեամբ
կատարելը անհրաժեշտ է: Ինչպէս՝

1. Հիւանդին հանուիլը, սրբուիլն
ու հագուիլը հազիւ մէկ երկու վայր-
կեան տեւելու է:

2. Լաթը թրջելու համար գործածե-

լի ջուրը կարելի եղածին չափ պաղ
ըլլալու է:

3. Մարմինը սրբելէ յետոյ, առանց
զայն չորցնելու, բաց ի դէմքէն ու
ձեռքերէն, անմիջապէս հագնելու է:

4. Հագնելէն ետքը, մարմինը տաք-
ցնելու համար, 5-10 վայրկեան պտը-
տելու է: Իսկ թէ որ հիւանդը անկա-
րող է, անմիջապէս անկողին մտնելով
ծածկուելու է:

5. Սրբելու գործողութիւնը միշտ
աջ կողմէն սկսելու է:

6. Հիւանդին մարմինը սրբելու ծա-
ռայող լաթը, սրբելու գործողութե-
նէն ետքը, անմիջապէս եռացեալ ջուրի
մէջ թրջող դնելէն ետքը լուալու է:

Հիւանդը, ենթակայ եղած հիւան-
դութեան առթիւ, ընդհանրապէս թո-
քատապով կողատապով, ցնցղաթոքա-
տապով եւ մինչեւ 40 աստիճան եւ
աւելի տաքութեամբ տառապելուն,
սրբելու այս գործողութիւնը անընդ-
հատ շարունակելու է, ամեն օր, մին-
չեւ որ տաքութեան աստիճանը 7ի իջ-
նէ: Մէկ խօսքով, գիշեր ցերեկ, ժա-
մը, մինչեւ իսկ կէս ժամը անգամ մը
սրբելու է, որ մի գուցէ տաքութեան
առթիւ հիւանդին իւզերը հալին, մկա-
նունք մաշին, ուժը սպառի:

Հիւանդին բուժման անհրաժեշտ են
ամեն միջոց ի գործ դնել, ինչպէս՝
կարելի եղածին չափ ջրային ցաւերը
մեղմացնելու, արագ ու դժուար շնչա-
ռութիւնը, զարկերակներուն թիւը ի
ջեցնել, հաղը, խուխը, քրտնքը քիչ-
ցնել, քնացնել, մանաւանդ ախորժա-
կը բանալ, մէկ խօսքով հիւանդին մար-
մինը զովացնել, կրակը մարել, որ կա-
րելի է միայն եւ միայն հիւանդին
մարմինը յաճախ սրբելով: — Ո՞ր հըր-
դեն առանց ջուրի կը մարի,

Երկրորդ. գործածութիւնն ճածի (լափա)

1. Տաժը կը պատրաստուի ճերմակ
խմորէ մը, որկէ պէտք եղած քանա-
կութիւն մը, խիստ բարակ տաժի վե-
րածելու չափ, կանխաւ եռացած խիստ
պաղ կաթով բոհելու է. առի 8 ծալք
ունեցող լաթի մը վրայ տարածելով
թոքին կամ թոքերուն հիւանդ մասե-
րուն վրայ դնելու է (սփռչկին ցուցու-
ցած կէտերուն վրայ):

2. Այս թաց ու պաղ լափան, կսրծ-
քին տաքութիւնէն կը տաքնայ՝ կը չոր
նայ. որ ատեն անմիջապէս փոխելու
է. եւ շարունակելու է այսպէս գիշեր
ու ցորեկ մինչեւ որ հիւանդին հաղն
ու խուխը անհետանայ, տաքութեան
աստիճանը իջնայ, որոնք թոքերուն
բորբոքման կարեւոր նշաններն են:
Աստեղ եւ հիւանդին անհրաժեշտ
պէտք եղած երկու դեղերը:

Այս երկու տեսակ դեղերը կը բա-

ւեն վերինը կատարելապէս բուժելու,
սո առաւելն երկու կամ երեք ամ-
սուան մէջ, հարբուխի, թոքատապի
ու կուրծքի սուր ու հին ամէն տե-
սակ հիւանդութեանց նման Այս եր-
կու դուրսէն գործածելի պարզ ու բու-
սեղէն դեղերէն զատ, հիւանդը դար-
մանող բժիշկը, ըստ պարագային, ջրա-
յին ցաւերը, հաղը, խուխը ու ան-
քնութիւնը, կարելի եղածին չափ մեղ-
մացնելու համար, կրնայ գործածել
հանդարտեցնող, կակղացնող, ինչպէս
եւ լուծողութեան կամ պնդութեան
առաջին առնելու համար, պնդողոցիչ
կամ թեթեւապէս լուծիչ, միշտ բուսե-
ղէն պաղ դեղեր:

Հիւանդին ստամոքսն ու աղիքները
զովացնելու համար ըստ աստիճանի
տաքութեան պէտք է խմցնել:

Ա. Առաւօտ եւ երեկոյ, մէկ ապու-
րի զգալ ձիթաւ. աւելորդ է ըսել
թէ իւրը պէտք է ըլլայ անարատ բա-
ղին բուն իսկ նշանակութեամբը:

Բ. Ժամը անգամ մը անպատճառ մէկ
ապուրի զգալ պատուական ու անա-
րատ ջուր. կէս ժամը տեղամ մը կըր-
նայ խմուիլ թէ որ հիւանդը շատ ծա-
րաւ ըլլայ կամ բերանը չորնայ:

Մէկ խօսքով, թէ՛ դոտուէն եւ թէ՛
մերսէն ջուր եւ միշտ ջուր:

(Շարունակելի)

ԹՂԱԹԿՑՈՒԹԻՒՆ

ԻՇԽԱՆ ՎԱՍԻՄԻՐ ՍՕՖԻԱՆ ՄԷՋ

Քաղաքը շքազարդուած է. այ-
սօր ժամը 3 կայարանը լեցուն է
հրաւիրուած հիւրերով, նախա-
րարներով, հիւպատոսներով .
նախկին նախարարներով, երես-
փոխաններով եւ խուռն բազմու-
թեամբ մը ժամը ճիշդ 4ին կա-
ռախուժը կեցաւ կայարանը:
«Ուրարներու խլացուցիչ հըն-
չիւնը կը թնդացներ կայարա-
նը: 21 թնդանութեան պայթիւ-
նով լուր տրուեցաւ քաղաքացի-
ներուն հիւրերուն հասնելու:

Չինուորական նուագները ըս-
կըսեցին անուշ նուագել:

Նախ կառախումբէն վար իջաւ
ն. Ա. Բ. Ֆիրտինանտ իշխանը
իւր հետ առնելով մեծն իշխա-
նուհին, վերջը Մեծ իշխանը, որ-
դին եւ թիւնապահները:

Քաղաքապետ Մարթին Թոտո-

ՕԳՏՈՒԵՑԷՔ ԱՌԻԹԷ

Հասան մեզ մեծ քանակութեամբ նոր առնուած

ՀԱՅԵՐԷՆ ԿՐՈՄՕՅՈՆԻ ՓԼԱԳԱՆԵՐ

Փութացէք ապահովել Ձեզ վաճառումը այս նոր փաթա-
ներու Ձեր նահանգին համար:

Մեր փաթեաներու ցուցակները հայերէն, տաճկերէն եւ
զանազան եւրոպական եղանակներու կ'ուղարկենք ձեր փա-
փաքողաց:

Հեծելանիւրի, կրամօֆոնի եւ պէնզին լամպաներու վառ,
մի տաք ապագրանք ուրիշ տեղ նախ քան մեր ցուցակները
աչքէ անցնելու:

Ն. ԱԼԵՈՆԱՔ Ե Ի. ԾԵՐՈՒՆԵԱՆ — ՌՈՒՊՈՒՐ

ԳՈՐԾԱՐԱՆ ՀԵՏԵԼԱՆԻԻ ՓՐՕՅԻՐԵՍ

բով կարճ ճառով մը և աղ ու հաց ներկայացնելով բարի գալուստ մատուցեց:

Մեծ իշխանը իր խորին շնորհակալութիւնը յայտնեց իրեն եղած ընդունելութեան առթիւ:

Հիւրերուն ներկայացուցան նախարարները, քաղաքագետը, զինուորականներ և պաշտօնեաներ:

Դեսպանական մարմնէն ներկայ էին ռուսական, Գերմանական և յունական հիւպատոսները որոնք երեքն ալ սերտ ազդակա- նական կապակցութիւն ունին ռուս թագաւորական պալատին հետ:

Հիւրերը անցան ընդունելա- սրահը հոն տեղւոյս Ռուս հիւպատոսի անշիկը մասնաւոր պատ- րաստուած ծաղիկներով մը նուիրեց Մեծ իշխանին:

Հոս մեր իշխանը ներկայացուց փոքր իշխան Պօրխը, զոր մեծն իշխան Վլատիմիր համբուրելով գգուեց, իսկ Պօրիս անոր ձեռքը համբուրելով բարի գալուստ մաղթեց:

Նաև կարգաւ ներկայացուցան նախարարները, որոնցմէ վերջ նախարար Սթանչէվ ներկայացուց Տէսօ Ֆանքովը, ռուսասէր կուսակցութեան պետը:

Յետոյ իշխանները չքեղ թա- փորով պալատ առաջնորդուեցան:

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻՒՐԻՒՄ

Սթանպօլտա ֆերընճըլար թա- թիլ էլմիշ օլմաղլէ, պիւթիւն չէհիր 24 սաաթ էքմէքսիզ գալ- տր: Պու սէպէպլէ էհալի վէլվէ- լէլէր գալարտը, գալկալար վէ գարընդըլըլար վոշու պուլտու- պաղըլար ետրէլէնտի: Պէլէտիլէ պէհէր էքմէքտէ 7-8 փարա պիր հազարը վէրկի արմագաւ օլտըլը կիպի, տիրէմի էքսիք օլմագ պէհանէսի իլէ գօմիսէրլէր հէր կիւն պիւլէրճէ էքմէքլէր ֆը- րընլարտան գալտըրմագաւ օլ- տըլարընտան, ֆերըն իշլէտէն- լէր թաթիլ իթմէկէ մէհպուր օլտուլար, զիրա տիկէր թարաֆ- տան ունլարըն ֆիյաթը տէ արթմըլ տըր:

— Եւմուրճագ իլլէթիւնէն Միտիլլի ատասընտա իքի չօճուգ էօլտիւ, եւմուրճագ ֆարէլէրտէն (մուկ) եայըլմըլ օլտըլը անլա- ղըլմըլ, Մէզքիւր ատայա վափօր կիտուպ կէլմէսի մէնն օլտընտու:

— Սամօս ատասընտա էհալի եէնի պէյի գապուլ իթմէլուպ բրէնս Գարաթօթթիւնին մէմու- րիլէթէ տէվամ իթմէսի իշիւն պիր միթիւնկ եափաճագ, Պէրի- տէն Սուլթան եէնի պէյ թային իթտիկի եօրկիտտիսի մայէթիւն- աէ հարպ վափօրը վէ ասքէր օ- լտրագ կէօնտէրմիշ տիր:

Հալպուքի 1832նին անտնամէսի անքթաճընճա՝ թիւրք հիւքիւմէ- թիւնին հագգը եօգ տըր մէզ- քիւր ատայա ասքէր եօլլամայա Պու մէսէլէ աղըրլաչաճագ կէօ- րիւնիւյօր: զիրա Սամսուլըլար զաթէն եուլանիստանա պիրլէշ- մէք մագսէտիլլէ ըսեանա մէյիւ- լի տիրլէր:

— Ինկիլիզ էլլիսի սօն տէֆա Սուլթանըն հուզուրընա չըգմտ- սընտա վէ քէզա ամիրալ Տրիւ- րի թագաթիմ իթտիկի կիւն՝ Թիւր- քիւնըն մալիլէսի ֆէնա խտարէ օլընտըլընը արզ էթտիլ էլլիւնին պու արզը պէօյիւք թէէսիւր հա- սըլ իթտի վէ տէրհալ Սուլթան իւշ նաղըրլարը: (Մալիլէ, Թիւր- քէթ, Ջրաաթ) չաղըրուպ, մէմա- լիքին մալիլէսի հիւսնի խտա- րէ իշիւն պիր ճէտվէլ թէրթիպ իքմէլէրիւնի էմր էլլէտի:

— Պապը Ալի Րում բաթրիգ- հանէսինէ գաթի պիր իսթարլէ Տրամատաքի Րում մէթթօթթիտին կէրի չաղըրմասընը լթէքար թա- լէպ իթտի վէ ասքի հալիւնտէ քէնտիսի ճէպրէն անը գօվաճա- ղընը պիւտիւրաի Բէզա քիլիսէ- լէրի գափամագ իշիւն բաթրիգ- հանէսին թէհտիտինէ ճէվապէն, Պապը Ալի տէմիշ տիր. լիսթէր քիլիսէլէրի գաբայընը իսթէր եաղըլանէլէրի, օ սիլիւն իսթէ- յինիլէ մուհալվէլ տիր. պի- ղիմ վազիֆէմիլ տէկիլ տիր:

— Պիղա միւթէսարըֆը Վանա վալի թային օլտընտու, էրզրում վէ Վան վիւլայէթլէրին անվալը էլան գարընը տըր:

— Մահմէթի ֆէվզէլատէ թա- րաֆընտան մահքիւմ օլան 18 պուլկարլար իշիւն Րում վէ Ա- վըստիւրա էլլիլէրի Պապը Ալիլէ պիր պէյաննալէ վէրտիլէր Պու Պուլկարլարըն մահքիւմիլէթի չէ- թա ռէլիսի Չուլքուլ իլէ միւպա- տէլէ իթտիքլէրի մէքթուպլարըն թուլթուլմասընտան իլէրի կէլ- միշ տիր: Մահմէթի ֆէվզէլա- տէնին գարարը իսթիւնաֆ օլա- մատըլընտան, էլլիլէր Պապը Ա- լիլին տըգգաթընը տալլէթ ի- տէէք տէյօրլար քի տալլայա թէմէլ թուլթուլան մէքքիւր մէք- թուպլարը թէտգըգ իտէնլէր եաղընա իգթիտարըլ տըրլար:

ՏԱԽԻԼԻԷ

Պուլկարիւնըն գուրթարընը- լարը նամընա եաբըլան ինչաաթ վէ սանէմլէրին ռէսմի քիւշաթը վէ թագաթիսի էվվէլէրի կիւն Սօ- ֆիատա բէք թանթանալը ուու- րէթտէ իճրա օլտընտուլ արը կրանտիւք Վլատիմիր, զէվճէսի վէ մալտուլը հաղարաթըն վէ Րում ժէնէրալլարըն օ՝ ալընտա հաղըր պուլտընմալարը չէնլիքլէ- րէ պաղչա պիր ռէվիւագ վէ չէօյ- լէ հասըլ իթմիլլէր տիր:

— Տօպրիշ էհալիսինին արգու- սը իւզէրիւնէ, չէհիր մէքքիւրէ

եաբըլմագաւ օլան չըմէնտըֆէր խաթթընըն Գօզլուճա վէ Գուրու Տէրէ նամ մահէլլէրտէն կէչմէ- սինի վիւքէլա մէհլիսի թահթը գարարա ալտը:

— Միլլա, թիւթիւն վէ սայիր նէպատաթ իշիւն սէրկի աչըլա- ճագ տըր Բէօստենտիլտէ սեպտ: 21տէ վէ իւշ կիւն տէվամ իտէ- ճէք տիր:

ԲԱԻՍԻԱ

Օտէսատա իսթիւլմըլար իքի բօլիս գաթլ էթմիշ օլտըլարըն- տան էհալի, պախուսուս լիսալիս Րուսլար իթթիհատը նամ ֆա- նաթիք չիրքէթի հիտտէթլէ- նուպ, Էհալտիլէրէ գարըլ լթէ- ճալուգաթա գալգըշտըլար. պիր գաչ քիշի էօլտիւ վէ եարէլէն- տի: Մէլքիւր խալիս Րուսլար- տան 22 քիշի տէրտէսթ օլտու- լար: Թէլէֆիյաթ 15 քիշիլէ պալիլ օլմուշ տըր:

— Րուս-ճարօն իթիւլաֆնա- մէսի Ջարաան թաստիգ օլտընտու: Նէշրի տախի էմր օլտընտըլ տըր:

— Տախիլիլէ նաղըրը եէնի Տոււմ իշիւն ինթիլապաթ թա- լիւթլարընը պիւթիւն վալիլէ- րէ կէօնտէրտի: Բէլլէր խաֆի օ- լաճագ վէ պիւրօլար հէր նէվ լթէլիլգաթտան խալի գալա- ճագլար:

— Թօմսքտան պիր թէլէկրա- ֆա պիւնաէն, բօսթա թրէնի սի- լահլը պիր չէթատան եօլտա մէնն օլտընտըլ, գօնտիւքթօր էօլտիւ թիւլմիւշ 2էթա 100,000 ռուպլի ալուպ կիթմիշ:

— Նիմնինիլօլօրօտու Գօլէրա- տան 20 քիշի, Սօլլէնսիլտէ 4 քի- շի վէ Սէրօսլալ վիւլայէթիւնտէ 37 քիշի թուլթուլմուշար տըր:

ԱՃԷՄԻՍՏԱՆ

Ուրմիւնըն ճէնուպի-ղարպ ճիհէթիւնտէ պուլընան կանֆա- ղիւնը 100լիք պիր պէօլիլ թիւրք ասքէրի թարաֆընտան զապթ օլտընտու:

— Թէհրանտա Մէհլիսի Մէ- պուսանտա օգուլան պիր թէլէ- կրթըն իշարը իւզրէ, թիւրք ասքէրլէրի աճէմ թօթրաղընտա 150 քէօյ իշլուլ իթմիլլէր:

— Եէնի վիւքէլանըն լթէքի- լի ուսուլիւնէ գարըլ բրթէսթ իթմէք իշիւն Մէհլիս Շահա պիր հէյէթ եօլլատը:

ԼԱՀԷՑ ԳՕՆՅԷՐԱՆՍԸ

— Պէնտէ իճթիւմ իթմիշ օ- լան սուլհէրվէրան գօնկրէսի Լա- չէլ գօնֆէրանսըն պիր մէք- թուպ եօլլալուպ, գօնֆէրանսըն հուսուլա կէթիւրտիլ սէմէրէլէր- տէն տօլայը պէյանը մէմուլի- լիլէթ էթմէքլէ պէրապէր, տէմիշ տիր: Եօնֆէրանսըն ասըլ մագ- սէտի մուհաթէլէրի նիղամա գօյմագ իլմայուպ, իլլա տայիմի օլմագ իւզրէ՝ պիր հէյէթի հա-

քէմիլէ լթէքիլի իլէ՝ տէվլէթլէ- րի մէհպուրի անքն հիւքիւմ- լէրիլէ իթաաթ իթմէկէ պօրճ- լանտըրան ումուլի պիր անտնա- մէ թանգիւմ էլլէմէք տիր:

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ԶԱԽԻՐԷ			
ՊՈՒՂՏԱՅ			
Վազօն	100	քիւ	18.50-20.40
Արապա	57-62	լիպ.	14. -16.40
ԱՐԲԱ			
Վազօն	100	քիւ	15. -15.20
Արապա	45-52	լիպ.	8.40- 9.20
ԵՈՒԼԱՅ արապա	33-36	լպ.	6. - 6.60
»	100	քիւ	14. -14.20
ԶԱՎՏԱՐ արապա	52-57	լպ.	12. -12.60
ՅԱՍՈՒԼԵԱ	100	քիւ	20. -26.
ՏԱՐԸ տրապա			9. -14.50
ԳՕԼՕԶ արապա	55-60	լպ.	14. -15.10
ՄԻՍԻՐ ԵՕԳ			
Կիւնտէ վազօն	20-25	վէ	250-300
արապա կէլմէքտէ.	վազօն մուսմէ-		
լէսի նարօլէօն	20 ֆր.	արապա մու-	
ալէլէսի քէզա	նարօլէօն	20.	

ՊԱԳԱԼԻԹԷ

Վարնա բնացաւընտա պաղպալիլէ մալլէրին պու կիւնքի ֆիյաթը, լիթուս ֆրանք իլէ:	
ԳԱՀՎԷ	1.65- 2.20
Շէֆէր նէմցէ	89.
Շէֆէր քէմէլ սանտըգ	44.50
Բիթիւն ձէնօվա չուվալը	45.50
» ձիւլպէ »	45.
» իւկիլիլ »	34.
Բիզօ »	50.
ԿՕԶ Սանտըգ	10.50
Չէթիւն հաղը քիւ	1.25- 1.35
ԳՈՒՐՈՒ Իւզիւմ	40.
Եումուրթա	100 ատէթի 5.60

ԻՇ ԱՐՍԵԱՆԼԱՐԱ

Գուրու-Բուլնար գաղաթիւտա Թուրք- ճըլար քէօյիւնտէ միւթէվէֆա թա- դէսաղա Պօղոսեանըն մալիւֆաթիւրա վէլպագալիլէ տի. քեանը վէ տէրուլիւ- տէքի 10,000 ֆրանքա եազրը զըյմէթ- տէ օլան մալլէր սաթլարճագ տըր: Թալիպլէսինէ եալընը մալլէրի սա- թուպ, տիւքեանը քիրա իլէ տախի վէրիլէ պիլէճէք տիր:

Մէլքիւր տիւքեան բէք իշլէք վէ միւլթէրիսի եէրիտէ օլտըլընտան հա- ղըր պիր իշլէ արզօլէք օլանլար պու ֆրոսթտան իսթիֆատէ իտէպիլիլէր:

Շու ասըլսէ միւրաճատթ օլտընտուլը Մատամ Մանիկ թ. Պօղոսեան օգսլիա Գուրու Բուլնար Սէլօ Թուրքճըլար

ԾԱԽԻԼԻ ԳԻՐԳԵՐ

ԹԻՒՂԱՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր. » Բ. » (433 էջ) 2 ֆր. ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆՔ ՀԱԵՎԱԿԱՆ Երկրորդ անգամ տպագ- րուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկար- ներու նիստ ու կացը ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատու- թենէն առաջ. Գին 50 անգիմ

ՀԱՅԻՆԵԼԻԹԻ ՁՈՋԵՐ Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեան- քէն: Չիղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմեց ՎԱՌՆԱ «Իրաւ ու յար» ի խմբագ- րութեան

Издатель: Д-ръ М. Торосянъ
печатня Д. Тодоровъ С-ко — Варна